

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Օրագրի անվանումը	<b>Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացում</b>
Մարզ	Լոռի
Համայնքը /համայնքները	Վանաձոր <b>Գուգարք</b> Շահումյան Դարպաս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	120 կմ, 5 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Համայնքի՝87 266 մարդ, Գուգարք 5671մարդ,
Սահմանամերձ համայնք/բնակավայր	-
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Ոչ
<p>Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,</li> <li>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,</li> <li>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,</li> <li>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ</li> </ul>	<p>Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում:</p> <p>Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, Խոշորացումից հետո միացվել են Գուգարք, Շահումյան և Դարպաս բնակավայրերը</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ Գուգարք համայնքի ջրամատակարարման ցանցը բավականին հին է, ենթակա է ամբողջովին վերակառուցման (2021 թվականի ընթացքում Գուգարքի տարածքում մեկնարկել է ջրագծերի նորացման՝ խողովակաշարերի ամբողջական փոխման գերմանական ծրագիրը, այն դեռևս ավարտված չէ ):</li> <li>➤ Գուգարք համայնքի գազամատակարարմամբ ապահովված է բնակչության շուրջ 90%:</li> </ul>

➤ Գուգարք համայնքի կենտրոնական փողոցների մի մասն է լուսավորված, որը կազմում է գյուղի ընդհանուր փողոցների 40%-ը (ապահովված է ԼԵԴ լուսավորությամբ):

Ծրագրով նախատեսվում է Վանաձոր համայնքի

1. Բաղրամյան պողոտա
2. Տիգրան Մեծ պողոտա
3. Մոսկովյան փ.
4. Խորենացի փ.
5. Թումանյան
6. Մյասնիկյան
7. Կ. Դեմիրճյան
8. Գր. Լուսավորչի
9. Վարդանանց
10. Բաթումի
11. Նալբանդյան
12. Զոր. Անդրանիկի
13. Երևանյան
14. Բանյո
15. Նժդեհ
16. Տերյան
17. Շիրակացի
18. Մխ. Գոշ
19. Բանակի փ.
20. Զորյան փ.
21. Աղայան փ.
22. Շինարարների փ.
23. Զաքարյան փ.
24. Աբովյան փ.
25. Ներսիսյան փ.
26. Նարեկացի փ.
27. Նարեկացի հրապարակ
28. Թումանյան հրապարակ
29. Վարդավառի ռապարակ

փողոցների արտաքին լուսավորության արդիականացում՝ փոխարինում լուսադիողային էներգախնայող լամպերով:

Վանաձոր համայնքի Բաղրամյան պողոտան հանդիսանում է գլխավոր փողոցներից մեկը՝ Երևան-Վրաստանի Հանրապետություն (Մ-6 ) միջպետական ճանապարհի մի հատվածը: Այն նաև Վանաձորի հարավային մուտքի գլխավոր պողոտան է:

#### **Բաղրամյան պողոտան՝**

լայնությունը	15մ
երկարությունը	1950մ
մայթերի լայնությունը	2,8-3,3մ
երթևեկությունը	2x2

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

Փողոցը լուսավորված է երկկողմանի: Լուսավորության հենասյուների թիվը 108: Սյուները տեղադրված են միմյանցից 30-33մ հեռավորության վրա: Երթևեկելի մասին 0,5մ հեռավորության վրա Սյուների բարձրությունը 9մ , թեքության աստիճանը 45° :

Բաղրամյան պողոտայի ճանապարհային ծածկը ասֆալտ է, մայթերը ասֆալտապար:

ներկայումս փողոցային լուսավորությունը ապահովվում է DENAT տիպի լուսատուներով, որոնց ծախսը բավականին շատ է:

Լուսավորության համակարգն ունի միայն արդիականացման կարիք, հենասյուները և սնուցման համակարգը գտնվում է բարվոք վիճակում:

Վերազինելով և արդիականացնելով Բաղրամյան պողոտայի լուսավորության ցանցը ` տեղադրելով էներգաարդյունավետ -լուսատուներ, համայնքը կունենա բավականին մեծ բյուջեի խնայողություն:

**Տիգրան Մեծ պողոտան** քաղաքի գլխավոր պողոտան է: Երկարությունը 2100մ: Փողոցը ասֆալտապար է:

Տիգրան Մեծ պողոտայի վրա են գտնվում Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատը, մի շարք դպրոցներ, քաղաքապետարանի և մարզպետարանի շենքերը, բանկեր, Վանաձորի պետական համալսարանը, բնակելի շենքեր և այլն : Պողոտան քաղաքի ամենաբանուկ հատվածն է:

Տեղադրված են թվով 118 սյուներ -լամպեր: Սյուների հեռավորությունը 30-33մ, Թեքությունը 45°:

**Թումանյան փողոցի** երկարությունը 900մ է:

Տեղակայված են 66 սյուն և լամպեր:

**Կ. Դեմիրճյան փողոցի** երկարությունը 4000մ է,

Տեղակայված են 130 սյուն և լամպեր:

**Չոր. Անդրանիկ փ.** երկարությունը 1500մ, 88 լամպ

**Երևանյան խճ.** 1770մ 183 լամպ:

**Վարդանանց փ.** երկարությունը 2900, 95 լամպ

Ընդհանուր ծրագրով նախատեսվում է փոխարինել 1776 լամպ:

Տեղադրել նոր 725 լամպ

Հիմնականում առկա են լուսավորության սյուները

Նոր տեղադրման կամ փոխարինման ենթակա է 150 սյուն

**Նշված փողոցների բնութագրերը ներկայացված են տեխ բնութագրում**

Լուսավորության արդիականացման հետևանքով խնայված միջոցները կուտակելով նախատեսվում է հետագայում փոխարինել նաև քաղաքի փողոցների լուսավորության համակարգերը և չլուսավորված փողոցները լուսավորելու:

Ներկայումս լուսավորված է քաղաքի փողոցների գրեթե 85 %-ը:

Լուսավորության վրա տարեկան ծախսվում է շուրջ 80 մլն 163 200 դրամ:

Միայն այդ լամպերի փոխարինմամբ հնարավոր է տարեկան շուրջ 15 մլն դրամի խնայողություն ապահովել, Ներկայումս փողոցների լուսավորվում են ըստ տարվա եղանակների միջինը 4,5 ժամ:

Փոխարինումից հետո հնարավորություն կստեղծվի 7-8 ժամ լուսավորված փողոցներ ունենալու, որը կնպաստի բնակիչների և տրանսպորտի անվտանգության մեծացմանը:

Նշված փողոցների լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտությունը բխում է, առաջին հերթին համայնքի տվյալ հարվածի բնակչությանն առավել հարմար կենսապայմաններով ապահովելը, նորմալ ենթակառուցվածքներ ունենալը, միջպետական և համայնքային ճանապարհների նորմալ և անվտանգ երևելության կազմակերպումը, ինչպես նաև զարգացնելու զբոսաշրջություն և տնտեսավարող սուբյեկտների բնականոն գործունեությունը:

Նշված փողոցներն ունեն ստատիստիկական նշանակություն:

Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի փողոցների լուսավորության արդիականացումը: Տվյալ ծրագրի իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ, որն իր ազդեցությունը կունենա համայնքի բնակիչների և այցելուների վրա:

**Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին**

Ծրագրի արդյունքում կունենանք

- LED լուսավորությունով լուսավորված փողոցներ
- տրանսպորտային միջոցների և հետիոտների համար ճանապարհային երթուղիների անվտանգության բարելավում
- համայնքի բնակիչների համար լուսավորված փողոցներ
- փողոցներին հարակից գործող բիզնեսների աճի խթանում /մարդկանց հոսքի ավելացում/

	<ul style="list-style-type: none"> <li>• նոր բիզնեսների համար գրավիչ միջավայրի ստեղծում</li> <li>• համայնքային բյուջեային միոցների խնայողություն</li> <li>• գիշերային լուսավորության ժամերի ավելացում առնվազն 3 անգամ</li> <li>• տուրիզմի զարգացում</li> </ul> <p>Վանաձորի համայնքապետարանը 2017թ. անդամակցում է &lt;&lt;Քաղաքապետերի դաշնագիր Արևելք&gt; ծրագրին, որի շրջանակներում կազմվել է Վանաձոր համայնքի &lt;&lt;Կայուն էներգետիկ զարգացման&gt;&gt; ծրագիրը: Ծրագրի նպատակներից է նաև CO2-ի արտանետումների մինչև 2030թ կրճատումը մինչև 30%: Ծրագիրը Եվրոմիության կողմից հաստատվել է 2018թ. սեպտեմբերին: Փողոցների լուսավորության ցանցի արդիականացումը, հնարավորության կտրա նաև կրճատել CO2-ի արտանետումներ</p>
<p>Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները</p>	<p>Ծրագրի արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Լուսավորման սխեմայի մոդելավորում</li> <li>2. Մոդելավորման արդյունքում ձևավորված գնման առաջադրանք</li> <li>3. Լիակատար տեխնիկական բնութագիր</li> <li>4. Մրցույթի հայտարարում</li> <li>5. Մոնիթորինգի աշխատանքներ</li> <li>6. Ծրագրի ավարտ</li> </ol> <p>Փողոցների լուստոտուների քանակի այլ տեղեկատվություն ըստ կից ձևաչափի</p>
<p>Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի</p>	<p>Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա համայնքի լուսավորության համակարգի նախահաշվային արժեքը:</p> <p>Կփոխարինվի 1776 լամպ: Կրեդադրվի նոր 725 լամպ</p>
<p>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք էներգաարդյունավետ լուսատուներով զինված փողոցներ: Ծրագրի շահառուներ կլինեն քաղաքի շուրջ 84 հազ բնակիչները: Ինչպես նաև քաղաքի այցելուները:</p>

Վերոնշյալ փողոցների լուսավորության արդիականացումը կնպաստի քաղաքի տնտեսական աճին, կբարձրանա ճանապարհային երթևեկության անվտանգության աստիճանը, կավելանան ներդրողների շահագրգռվածությունը տվյալ հատվածներում ներդրումներ կատարելու համար, որն էլ կնպաստի համայնքի բյուջեի մուտքերի աճին:

Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվեն 6-8 ժամանակավոր աշխատատեղ /մոնտաժողներ/ և 3 հիմնական աշխատատեղ / սպասարկող/

Գիշերային լուսավորության արդիականացումը կնպաստի հարակից տարածքի տնտեսվորող սուբյեկտների զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 4379689783 դրամ.

	<b>Պլանը</b>	<b>Փաստացին</b>	<b>Տոկոսը</b>
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /1+2-3/,որից</b>	4379689783	3909820498	89.3
<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները /1.2+2.2-3/ այդ թվում՝</b>	3738267035	3268397750	87.4
1.Վարչական բյուջեի մուտքեր, որից՝	3161004827	3206695899	101.4
1.1 Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	23382292	23382292	100
1.2 Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	3137622535	3183313607	101.5
- Սեփական եկամուտներ	1079319100	1128497244	104.6
2.Ֆոնդային բյուջեի մուտքեր, որից	1414102656	703124599	49.7
2.1 Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	618040456	618040456	100
2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ	796062200	85084143	10.7
3.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	195417700	0	0

<b>Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր /1+2-3/, որից՝</b>	4379689783	3077076197	70,2
<b>1. Վարչական բյուջեի ծախսեր</b>	3161004827	2780771816	88,0
<b>2. Ֆոնդային բյուջեի ծախսեր</b>	1414102656	296304381	20,9
<b>Հողի և գույքի օտարումից մուտքեր</b>	-518900000	-603631815	116,3
<b>Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը /Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝</b>	1933002656	899936196	46,6
- Աշխատակազմի պահպանման ծախսեր	22400000	9195948	41,1
- Ճանապարհային տրանսպորտ	934986282	475179715	50,8
- Շրջակա միջավայրի պաշտպանություն	36500000	14709914	40,3
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	465847300	214015723	45,9
- Մշակույթ	364120340	120402851	33,1
- Կրթություն	109148734	66432045	60,9

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	****
--------------------------------	------

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը	
---	--

Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա- հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ- ներով	----
--	------

Օրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝	<b>180 063 000 ՀՀ դրամ (100%)</b>
- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,	5 130 000
- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական	

փորձաքննության ծառայության արժեքը _____ դրամ,	513000
- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը _____ դրամ,	2 736 000
- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը _____ դրամ,	684 000
- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը _____ դրամ,	
ինժեներատեխնիկական հետազոտության ծառայության արժեքը _____ դրամ	
ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
<b>Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը</b>	<b>81 028 350 դրամ (45%)</b>
<b>Այլ ներդրողներ</b>	<b>..... դրամ ( .... %), նշել ներդրողի անունը:</b>
<b>Ծրագրի իրականացման տևողությունը</b>	<b>Սկիզբը մարտ 2022թ. Տևողությունը 6 ամիս</b>
<b>Ծրագրի ծախսերը</b>	<b>Ծրագրի շինարարական աշխատանքների ծախսերը կազմում են 171 000 000 դրամ</b>
<b>Ամսաթիվ</b>	<b>08 հուլիս 2022թ.</b>

**ԶԾ, ԱԿ և ՏՏ բաժնի պետ՝ Լ.Դավթյան**  
 Email: [vanadzorcity@mail.ru](mailto:vanadzorcity@mail.ru)  
 Հեռ. 044040133

**Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար**



**Ա.ՓԵԼԵՇՅԱՆ**  
 (անունը, ազգանունը)